



ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐՏԻԿՅԱՆ

(Առաջնորդական տեղազան Աղբյուրների բնմի)

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՄԱՐԱՍԻ ՈՒ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԵՐԸ

Շուշին, Լեռնային Ղարաբաղի նախկին մայրաքաղաքը, բազմաթիվ քարեր սարահարթի վրա, որը համարյա առանձնացված է իր չորս կողմերից: Շուշին ծանոթ է նաև Բերդ, Բերդաքաղաք և Ամրոց անուններով:

Հայերը Շուշի են գաղթել Ղազանչիից, Ազուլիսից, Մեղրիից և Արցախի հայ գյուղերից: Այս իսկ պատճառով քաղաքի եկեղեցիները, բացի իրենց օժման անուններից, սովորաբար ունենցել են և երկրորդական անուններ, որոնք ավելի գործածական են եղել. օրինակ՝ Ղազանչեցվոց եկեղեցի, Ազուլեցվոց եկեղեցի, Մեղրեցվոց եկեղեցի¹:

Ղազանչեցվոց Ամենափրկիչ եկեղեցին շինված է ամբողջապես սրբատաշ կրաքարով, կառուցված խաչաձև չորս հաստատուն սյուների վրա, հոլակապ և բարձրաշեն, լուսավոր և փառահեղ, միաժամանակ զարդարուն ներքուստ և արտաքուստ: Ունի երեք դուռ՝ հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերից, որոնց վրա արտաքուստ շինված է երեք նույնպիսի հոյակապ և գեղեցկաշեն սրահ: Եկեղեցու երկարությունն է 34,75 մ., լայնությունը՝ 22,70 մ.:

Հարավային դռան գլխին, արտաքուստ, կա հետևյալ արձանագրությունը.

«Շենորհի և ողբմութեամբ ամենագործին Աստուծոյ կառուցաւ ճարտարութեամբ սուրբ տաճարս արդեամբ և արօք բարեպաշտօն ժողովրդականաց Սուրբ Ամենափրկիչ եկե-

ղեցայն Ղազանչեցոց Շուշի քաղաքիս, որոյ շինութիւնն ականջ է 1868 ամի, յատուս քաղաքաւորութեան աստուածագօց ինքնակալ մեծ կայսեր ամենայն Ռուսաց Աղէքսանդր Բ-ի և ի հայրապետութեան Գէորգայ Գ-ի, աւարտեցաւ ի 1887 ամի, ի քաղաւորութեան որդւոյ ճորին օրհնարանեալ կայսեր Աղէքսանդր Գ-ի և ի կաթողիկոսութեան Մակարայ Ա-նոյ, ի 20 սեպտեմբերի 1888 ամի»:

Արտաքուստ, եկեղեցու արևմտյան գավթի ճակատին դրված է քարից շինված Փրկչի գեղեցիկ պատկերը, աղոթողի դիրքում:

Արևմտյան գագաթի վրա Փրկչի գրկած է խաչափայտը:

Հյուսիսային գագաթի վրա կանգնած է Ս. Հովհաննես Մկրտիչը:

Արևելյան գագաթի վրա պայծառափայլ արձանացած է խաչափայտը:

Հարավային գագաթի վրա իջնում է Ս. Հովհաննէս:

Ամենափրկիչ եկեղեցին արևմտյան կողմում ունի եռահարկ զանգակատուն, զետնահարկի չորս անկյուններում դրված են չորս հրեշտակների քարաշեն, մարդահասակ բարձրությամբ արձանները, որոնք հահարկու տեսլամբ փչում են փողերը: Այս զանգակատունը որպես հիշատակ կառուցել է հանգուցյալ բարեպաշտ Աբրահամ Խանդամիրյանցը:

Եկեղեցու ավագ խորանի առաջ կա հետևյալ արձանագրությունը.

«Ընծայեցաւ սուրբ պատկերս ի յիշատակ աշխատողի յիճու... Եկեղեցայս Ամտիսի Եարամիջեանց և իւրայնօգն ամենից, 1886 թ. ճարտարապետ Սիմէօն Տէր Յակոբեանց»:

¹ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց, «Արցախ», Բաքու, 1895 թ., էջ 137:


Մկրտությունն ավագանը ունի հետևյալ արձանագրությունը.

«Եթէ ոչ ոք ծնցի ի ցրու և ի Հոգույ, ոչ կարէ մտանել յարժայութիւն, 1871 թ.»:

Ամարաս.— Ամարասի վանքը գտնվում է Արցախի Վարանդա գավառում, որտեղ Լուսավորչի և Խազեղի սարերը ձևացնում են գեղեցիկ հովիտ, որի միջով հոսում է Ամարասի վտակը, սկիզբ առնելով շրջակա դյուղերի աղբյուրներից: Հին ժամանակ այստեղ եղել է մի գյուղ, որտեղ Ս. Գրիգոր Լու-

նով և նշխարները դնելով միակտուր քարե տապանի մեջ, պահում է ծածկաբար իր առաջվա տեղում:

ԺԳ դարի վերջերը թաթարների Բայտուն խանը, ըստ Օրբելյանի տեղեկության (գլ. 2), կողոպտել է այս վանքը և տարել Ս. Գրիգորիսի գավազանը և ոսկեծուլ 36 ակներով զարդարված մի խաչ: Հունաց կայսեր Դեսպինա դուստրը, որ Ապաղա խանի կինն էր, իր ամուսնուց խնդրել է այդ խաչը և գավազանը զրկել Կոստանդնուպոլիս:



ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔԸ

սավորիչը հիմնարկել և իր թոռ Գրիգորիս ավարտել և օծել է մի եկեղեցի: Աղվանից կաթողիկոս Ս. Գրիգորիսի նահատակությունից հետո, աշակերտները հավաքելով նրա նշխարները, բերել և ամփոփել են այս եկեղեցում: Այնուհետև Ամարաս գյուղը դարձել է նախ եպիսկոպոսանիստ և ապա Աղվանից կաթողիկոսների աթոռանիստ:

Ե դարի վերջերը, 489 թվականին, Աղվանից Վաչագան Գ թագավորը եկեղեցու արևելյան կողմում գտնում է Ս. Գրիգորիսի մարմինը և նորից ամփոփելով, գերեզմանի վրա մատուռ է շինել տալիս: Որոշ ժամանակ անց Վաչագանը կառուցել է տալիս նաև հոյակապ մի տաճար Ս. Գրիգորիսի անու-

1387 թվականին, Արցախի ուրիշ վայրերի հետ, Ամարասը ևս ենթարկվել է Լենկթեմուրի ավերմունքներին: Դեռ ժողովուրդը պատմում է, թե ինչպես այդ բռնավորը Ամարասից մինչև Արաքս շարելով իր զորքերը, հրամայել է վանքի և Արքայաշեն հրաշակերտ եկեղեցու քարերը միմյանց տալով գետը թափել: Լենկթեմուրի մահից հետո, տեղի շրջակա բնակիչները, նախկին եկեղեցու հիմքի կեսի վրա, անարվեստ, բայց ամրակուռ և կրաշաղախ եկեղեցի շինեցին, որ տևեց մինչև 1858 թվականը:

ԺԷ դարում, Ամարասի միաբանության համար, Հիրհեր գյուղում կառուցվել են գեղեցիկ եկեղեցի և սենյակներ:

Շատերի կարծիքով, նույն վանքի ամառանոցն է եղել նաև Վերին Բաղավաղից դեպի հարավ-արևմուտք մեկ ու կես ժամ հեռու գտնվող և գետնի մեջ թաղված եկեղեցին, որ այժմ ուխտատեղի է Բարևածառ անունով: Բարևածառի համար ավանդութուն կա, թե հին ժամանակները այստեղ ապրում էր մի եպիսկոպոս, և ամեն անգամ, երբ նա երկար ծոմապահութունից և ճգնութունից հետո պատարագ էր մատուցում, շրջակայքի ծառերը ողջունի ժամանակ երեք անգամ խոնարհում էին իրենց գագաթները և միմյանց կպցնելով ողջուն տալիս²:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը այս Բարևածառն անվանում է Ջոխտ-Պուրվածառ (Ջուլգ Պառավածառ)³:

ԺՔ դարի սկիզբը Ամարասի վանքը անտեր մնալով ընկել է թուրքերի ձեռքը, որոնք այն Աղ-օղլան (Սպիտակ տղա) էին անվանում և իրենց ուխտատեղի էին դարձրել: Այսպես կոչվելուն պատճառն այն է, որ հրաշագործ Ս. Գրիգորիսը միշտ երևում էր սպիտակազգեստ և մանկատեսիլ:

ԺՔ դարում որոշ ժամանակ ուռաց գորքին իբրև բերդատեղի է ծառայել Ամարասի վանքը: 1832-ից մինչև 1847 թվականները մաքսատուն է եղել Աղվանից միտրոպոլիտ Բաղդասար արքեպիսկոպոս Ջալալյանը շատ աշխատելով վերջապես հաջողվել է մաքսատունը տեղափոխել Սրասիի ավի մոտ, և վանքն իր կալվածներով 1848-ին վերադարձվել է հայոց իշխանության: Այժմ ժամյան վանքի եկեղեցին կառուցված է 1858-ին, գլխավորաբար շուշեցվոց օժանդակությամբ: Նույն տարվա ապրիլի 23-ին եղել է երկրորդ գլուխն նշխարաց Ս. Գրիգորիսի և մեծ հանդես կատարվել:

Եկեղեցու երկարությունն է 23 մ., լայնությունը մոտ 13 մ., և բարձրությունը 6 մ.: Կառուցված է ամբողջապես կաթնագույն սրբատաշ քարերով:

Ավագ խորանից բացի ունի երկու փոքրիկ խորաններ, տասը լուսամուտ, որոնցից 6-ը մեծ և 4-ը փոքր, արևմտյան կողմում մի դուռ և փոքրիկ կաթողիկե, որը ծառայում է նաև որպես զանգակատուն:

Ավագ խորանի տակ է ստորերկրյա հին վիրապը, 3,75 մ. (ներսից հաշված՝ 3,70 մ.) երկարությամբ, 1,90 մ. լայնությամբ և 3,50 մ. բարձրությամբ, որտեղ ամփոփված են Ս. Գրիգորիսի նշխարները: Դասի հարավային կողմում, բեմի մոտն է այդ վիրապի մուտքը, որն այժմ խափանված է:

² Էփրեկյան, «Բնաշխարհիկ բառարան», հատոր Ա, էջ 135—136:

³ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց, «Արցախ», էջ 90:

Հյուսիսային դասի մոտ, պատին կից, կա 1889 թվականից շուշեցի ճարտարապետ Միքայել Տեր-Իսրայելյանցի աշխատությամբ շինված Ս. Գրիգորիսի քանդակազարդ գեղեցիկ մի տապանաքար արձանագրությամբ հանդերձ:

«Տապանաքարս Սրբյն Գրիգորիսի աշխատութեամբ [կ]արապետ Միխայէլ Տէր Խորայէլեանց Շուշոյ ի յիշատակ շինեաց ննջեցեաց իւրց ի 1889 ամի 1 նոյեմբերի»:

Վանքն ունի նաև պարիսպ, որի երկարությունը արևելքից արևմուտք 94 մ. է, լայնությունը՝ 56,40 մ.:

Վանքի պարսպին կից կան կամարակապ սենյակներ, որոնք կարոտ են նորոգության⁴:

Գաճախար.— Արցախի ամենահուշակալոր վանքն է, գտնվում է Խաչեն գավառում, Գաճախար լեռան հարավային ստորոտում, գեղադիր, տեսարանավոր բարձրավանդակի վրա: Վանքը իր անունն ստացել է Գաճախար սարից, որ այս կողմերի բնակիչների պատմածի համեմատ արծաթի հանք է ունեցել, որի համար այսպես է կոչվել:

Այս հուշակալոր վանքի հիմնարկության ժամանակն ճալանի շէ, բայց Ջալալ-Դուլա իշխանից ավելի առաջ է եղել, որ շատերի կարծիքով նրա շինողն է, որովհետև Սյունյաց պատմիչից հիշվում է Ժ դարի կեսին, և Մխիթար Գոշից՝ ԺՔ դարում: Եվ որովհետև Ջալալյան տոհմի տապանատունը այս վանքի մեջ էր և Ջալալ-Դուլայի հայրը կտակով պատվիրել է իրեն, որ հայրենի հանգստարանի վրա եկեղեցի շինի, ուստի սա իր հոր կամքն հարգելով վանքը նորոգեց և շինեց այժմյան հուշակապ եկեղեցին 1215—1238 թվականներին: Նրա ընդարձակ արձանագրությունը դեռ բավականին լավ պահպանված է տաճարի ներսում, ավազանից վերև:

«Յառուճ Սուրբ Երոզդուպեան Հաւր և Որդոյ և Սրբոյ Հոգւոյն այս գիր արձանի է, գոր ես նուստ ծառայ Աստուծոյ Ջալայ Դուլա Հասան որդի Վախտեագայ՝ բռն մեծին Հասանայ՝ բեակաւոր ինքեակայ բարձր և մեծ Արցախական աշխարհի, բազաւոր և ի յոգնասանման ետեանգի. գի հայրն իմ ի վախնան կենաց ելից իւր աստեացս անդարձ կտակի հաստատեաց ինձ և մաւր իմոյ Խորիշանի՝ որ էր զուստր իշխանաց իշխանին Սարգսի, գի ջինեսցաւ գեկեղեցիս ի գերեզմանատուն հարց մերոց ի Գաճախար, գոր սկսեայ մեր ի ՈԿԵ բուին Հայոց աւգականութեամբ բարեբարին Աստուծոյ. և ի խփել լուսամտին արեւից մայրն իմ կաւնաւորեայ յգաւ յԵրուսաղէմ երկրորդ անգամ, անդէն ի գրան Յաւուպեան խարագ-

⁴ Էփրեկյան, «Բնաշխարհիկ բառարան», հատոր Ա, էջ 135—136:

նազգեսց հզնութեամբ, բազմամեայ ժուժկա-
յութեամբ հանգեալ ի Քրիստոս յուսոյ վկա-
յութեամբ և անդէն պանեցաւ: Իսկ մեր
գրագվածութի կենցաղոյս ի մտի եղեալ փոյթ
գործոյ արարեալ պարտումն եղև շնորհաւ
ողորմութեան ամենագոյր Տեառն ՈՁ է բոլին
գաւտէորեալ ամենագան ձեալ, պատկերա-
գան յարիւնակերտ գմբէթագարդ յարիւնուա-
ծով յաւժարութեամբ կամագ մերոց, որ-
պէս տեսանէ Աստուած. հոգացաւ զպէտս
միաբանիցս զհիշարայս Մաշեղ Հարչանտուս
բոյր-հոջն, մէկ լուծ հաշեանձոր, Եորաշէն-
կան գետն Այգեստան, Սեղեկնի, գոր իմ
հայրն էր տուեալ Սահակայն, Փուրկատոս-
տիցն, Արծաթեհիսն, որ ես տուի խաչաւ,

դանն, որ իմ է, յԱստուածածնէն մինչև խաչն
իմ պապուն Հասանայ: Յիսնակաւտէն մին,
ի Յայտնութիւն Մամբանայ իմ կենակցին,
Որորէից ելիցն մինչ ի Առաջատուն հասա-
րակաց անյիշատակաց, Բարեկենդանին Ա.
շաբաթն իմ եղբար Դաւիթն, Բ շաբաթն իմ
հուերն Մարիւնայ, Աղունագից շաբաթ կիրա-
կէֆն իմ եղբարն Իսանէին, Չատկէն մինչև ի
Աստուածածնէն և ի Խաչէն մին, ի Յիսնա-
կամուտն ինձ Հասանայ: Արհնեցաւ եկեղե-
ցիս ի ՈՁ^Թ բոլին ի հայրապետութեան Տեառն
Ներսիսի Աղունագից կաթողիկոսի: Հաս-
տատ է գիրս կաման Աստուծոյ, որ հակա-
ռակի, ռոսխն Աստուած է և իւր սուրբն:
Անտանի տունին մի ար ժամ Յովասապ



ԳԱՆՁԱՍՍՈՒԻ ՎԱՆՔԸ

գրաւ, մասամբ, ճշխարաւ, պատուական
ձուլածոյ ամենայն սպասուր և հանդերձ ե-
րեւի զարդուր ի փառս Քրիստոսի Աստուծոյ
մերոյ. և Աստուծով ի մեր իշխանութեան
եկեղեցիս ազատ են կամալ Տէր Վարդա-
նայ առաջնորդի սուրբ ուխտիս և միա-
բանիցս գրեցաւ ժամ գաւազ խորանն բոյր
տարին մեզ, և այլ ամէն եկեղեցիս Չա-
տիկն իւր ճրագայուցովն իմ հարն է Վախ-
տանգայ, Աստուածածնին Դ արն իմ մարն
Խորիշանին, և Յայտնութիւնն իւր ճրագա-
յուցովն իմ եղբար Զափաւէի, գաւազ սե-

միայնակեցին կատարի կամալ մեծին Հա-
սանայ»⁵:

Եկեղեցին շինված է ամբողջապես սրբա-
տաշ քարով շորս հրաշակերտ կամարների
վրա և նվիրված է Ս. Հովհաննես Մկրտչին:
Ունի հոյակերտ կաթողիկէ, մեկ ավազ և
ութ փոքր խորաններ, մեկ դուռ արևմտյան
կողմից, ութ փոքր, երեք միջակ, շորս բոլո-
րակ և շորս մեծ լուսամուտներ:

⁵ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց. «Արցախ»
էջ 173—174:

Տաճարի երկարությունն է 16,95 մ., լայնությունը 12,25 մ.: Եկեղեցու արևմտյան կողմում, կից, շինված է փառավոր գավիթ՝ սրբատաշ ջարով:

Մեկմեկու մեջ ազուցված շորս խաչածե կամարների վրա հանդած է զանգակատան գեղեցկաքանդակ գմբեթը: Գավիթն ևս ունի իր շինություն արձանագրությունը, որից տեղեկանում ենք, որ Զալալ-Դոլան, ամուսինը՝ Մամբան և հարազատ որդին՝ Աթաբակ, եկեղեցու շինությունն ավարտելուց հետո հիմնարկած են այս գավիթը: Ինչպես երևում է՝ գավթի շինությունը սկսված է Զալալ-Դոլալի կենդանության օրով և ավարտված է նրա մահվանից հետո, իսկ արձանագրությունը գրված է շինությունը ավարտելուց հետո, որովհետև կրում է ՉԺԵ (1266) թվականը:

Քուրիե ՉԺԵ կաման ամենակալին Աստուծոյ ես Զալալ Դալաս որդի Վախտանգայ կողմանցն Արցախայ և ամուսին իմ Մամբան բռնե Բաղուց բազաուրիե, և հարազատ որդին իմ Արարակն յեա կատարման եկեղեցույս հիմնարկեցաք ժամատունս և բազում աշխատութեամբ արարեցաւ, գոր և հայցեմ անմտաց յիշել յաղաքս ձեռ. փոքր բնծայ տուի գՄառգեղն իւր շարեխարսովն, զճնուանց իւր սանմանովն: Դարձեալ ես Արարակս բնծայեցի յաժարութեամբ ոսկետուսի Աւետարան և պատառակն սուրբ Եղան, գՔրիստափորն և զմեք հայրենի հարաւակունն գՔրիին իւր սանմանովն. և սանմանեցին զեաշի ութարէքն պատարագի գՔրիստոս: Եւ եթէ քրիստոսադաւան ոք հանել ջանայ, ի փառացն Աստուծոյ մահով և կենեալ եզոված է, և յիշատակ նորա մի՛ յիշեսցի առաջի Աստուծոյ, և թէ մահմետական ոք գիտող հանէ այս եկեղեցոյս, առ հասարակ եզոված յԱստուծոյ և ի մարգարէիցք:

Եկեղեցու շինությունից տասներկու տարի հետո Զալալ-Դոլան Ղազվին քաղաքում նահատակվում է անգութ Արղուն խանից և գցվում ցամաք ջրհորի մեջ, որի մարմինը հետո Աթաբակ որդին բերել տալով ամփոփում է Գանձասարի գավիթը, տաճարի դռան մոտ:

Իշխանազուն պայազատները և Աղվանից կաթողիկոսները շեն են պահում այս վանքը մինչև ԺԶ դարի կեսը, հետո թվում է, թե ամբողջ մի դար անշուք վիճակի մեջ է մնացել:

Ապա 1657⁶ թվականին Հովսեփի որդին Արով Թալիշա մեյիքը, նորոգել է եկեղեցու և գավթի տանիքը, ինչպես նաև խախտված

⁶ Էփրեկյան, «Բնաշխարհիկ բառարան», հատոր Ա, էջ 462—464: Սակայն արձանագրությունը ավելի ուշ է ցույց տալիս:

որմերը: Մեկիք Արովի արձանագրությունը գտնվում է գավթի դռան ներքև:

«Ի ՌՄԼԹ բուխս կաման Աստուծոյ ձեռամբ Տեառն Յովհաննու կաթողիկոսիկն ես Ապալ (Մեկիք Արով) ուզբաշի որդի Մէլիք Յովսեփա: Թալիշու և իմ կենակից Հերիքեազ և որդիք Մէլիք Պէկյար և մէլիք Ապալ մեք հալայ արդեանց շինեցաք սրբոյ Արոռոյս Աղուանից Գանձասարու երկու եկեղեցեազ (տաճարի և գավթի) տանիսն և խախտեալ որմունս բազում աշխատութեամբ յիշատակ մեզ և ենջեցեյոց մեռոց...»:

Գանձասարի վանքը եղել է Աղվանից կաթողիկոսարան, սկսած 1555 թվականից, և պատմական դեր է կատարել հայ ազատագրական շարժումների պատմության մեջ: Հայ ազատագրական շարժման ծրագրերը այնտեղ են կազմվել Իսրայել Օրու, Մինաս վարդապետի և ուրիշների ղեկավարությամբ:

1815 թվականին Աղվանից կաթողիկոսությունը վերացավ և եղավ միաբնակչության:

1836 թվականին Աղվանից վերջին կաթողիկոս և միաբնակչության Սարգիս Ե-ի հաջորդը՝ Բաղդասար Հասան Զալալյան արքեպիսկոպոսը Գանձասարից Աթոռը փոխադրեց Շուշի:

Գավթում են գտնվում կաթողիկոսներից ոմանց տապանաքարերը արձանագրություններով, որոնց թվում Մեծ Զալալի դամբանը բոլորի կենտրոնում:

Տաճարի և գավթի որմերի վրա արտաքուստ փորագրված են բոլոր շարժական և անշարժ կարվածների նվիրատուների անունները:

Գավթի հյուսիսային դռան ճակատակալ քարի վրա կա հետևյալ արձանագրությունը. «Քվիե Չի (1271) կաման Աստուծոյ ես Յովհաննէս որդի Իսանէի առաջնորդ սուրբ ուխտիս Գանձասարայ հրամանաւ տեառն իտաշեա Արարակիկն յիմ հալայ արդեանց գնեցի գՎարդանայ թաղս մին չորից և գնա և այլ բնծէք տվի սուրբ կաթողիկէս. միաբանես տվիքն գՈհանու, գԱկորա տունիքն գամէն եկեղեցիքս ինձ պատարագ...»:

Հյուսիսային մասում, արտաքուստ.

«Ես Արատ որդի Փիրհամգին տվի բեմին հողն իմ պապեց հողուն սուրբ ուխտիս Գանձասարայ առաջնորդութեամբ Տէր ներսէսի թվ. Զիք»:

«Ես Այտինս Խիմէս որդիք Արարակիկն տվաք Այմանայաք հողն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ Տէր ներսէսի թվ. ԶԽԳ»:

«Քվ. ԶԴԵ. Ես Սարգիս կաթողիկոս որդի նատիր Մէլիքիկն, բռնե մեծին Սայաունիկն և գնեցի գնայրեմիքն ի Կասրայ Զ քառակն, միակ տան Դ քառակն ու կէսն, Առատունոյ Բ

բստակն, Կոռայանայ Դ բստակն տվի սուրբ ուխտս Գանձասարայ. ով գայս հայրենիքս հանէ ի սուրբ եկեղեցոյս, ԳՃԺԸ (318) հայրապետացն եզոված է, Սուրբ Ովանիսիս (Հովհ. Մկրտիչ) կապած»:

«ԹՎ. ՊԺ. Իշխանութեամբ մեծի Իանէի ես Տէր Կոստանդ մեծ փափագանաւ գնեցի գգանկականիս, սուրբ ուխտս բերի»:

«Ի թվս. Ջի. Ես Պուտաղս ու Վախաւեզս և այլ եղբարքս միաբանեցաւ ու տուաւ Փտուռանց, Կակաչանց, Մաղկավանաց Գ բստակն տուաւ ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ Տէր Ներսիսի»:

Գավթի և տաճարի հարավային կողմում, արտաքուստ.

«Կաման Աստուծոյ ես Մեյիքս որդի Սայտունին բռնե մեծին Աղպաստու շուրջառ, սկի և բնծայ այլ Կակաչանց, Փտուռանց, Մաղկավանց... տվի ի սուրբ ուխտս Գանձասարայ...»:

Տաճարի հյուսիսային մասում ամփոփված են Նրեմիա կաթողիկոսի եղբայրը՝ Արիստակես եպիսկոպոս, Մովսես Խաչակիր վարդապետ, Հովսեփ վարդապետ, Գրիգոր վարդապետ և Հովսեփ գիտնական վարդապետ.

«Յովսէփ՝ գիտնական վարժապետ-վարդապետ էր Աագեանց Արցախայոյ պերն, տապան որպէս կարես, հանդուրժես, մեծն վարժապետն ի քեզ կրեայ գետեղես, գնինաւորց երախտաւորն ամփոփես, զանխօս մանկունս ի սուրբ ճօրէն որք բողես, եկա՛յք բնկեբք, ո՛

ղոք մուգայք սիրասուն զնօրս զվան յորդ արտասուօք ողբացոյք, եթէ Յիսուս գիւր Դազարիս արտասունաց. 1847»⁷:

Հյուսիսային մասում են գտնվում մի քանի թաղակապ հին սենյակներ, որոնցից մեկը կոկիկ է և քիչ ավելի մեծ և կոչվում է Վեհարան, կառուցված է սրբատաշ քարերով, պատի վրա ներսում կա արձանագրություն.

«Նրեմիա կրդկ. շնց. ի ք. ՌՃԼԸ»:
Արևելյան մասում կա երկհարկանի շինություն հետևյալ արձանագրությամբ.

«Շինութիւնք երկրկնի
Այստօրին Անտօն վարդապետի.
Նա է յեջտակ անջջեղի,
Տէսողք յիշեն Աժ ողորմի.
Ի հայրապետութեն Տ. Մկրտչի
1898 ամի»:

Այս երկհարկանի շինությունը ներկայիս ծածկ չունի:

Վանքը ունի նաև շրջապարիսպ: Ժամանակին պարիսպը ունեցել է երեք դուռ՝ արեւմելյան, հարավային և արևմտյան: Հիմա ունի երկու դուռ՝ հարավային և արևմտյան: Պարսպից դուրս եղել է ուղտանոց, որը դեռ մնում է: Ըստ տեղական ժողովրդի պատմածի, այստեղ պահված ուղտերով են բերվել տաճարի քարերը:

Գանձասարի վանքը ունի նաև իր աղբյուրը, որը կոչվում է Վանքի աղբյուր:

⁷ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց, «Արցախ», էջ 179:

